ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 64

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասով, 23-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 58-59-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Ոստիկանության Կոտայքի բաժնի 21.01.2021 թվականի՝ Աստղիկ Ղազարյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը, ինչպես նաև՝ Աստղիկ Ղազարյանի լիազորված անձ Մասիս Պետրոսյանի բացատրությունը, նկատի ունենալով, որ իրավախախտի կողմից 12.01.2021 թվականի դրությամբ վճարվել է օրենքով սահմանված տեղական տուրքը ընթացիկ ողջ տարվա համար **որոշում եմ.**

1. Աստղիկ Ղազարյանի կողմից Կոտայքի մարզի Վերին Պտղնի վարչական համայքի Երևան-Սևան մայրուղի թիվ 12 հասցեում առանց համապատասխան թույլտվության տնտեսական գործունեության՝ Առևտրի և հանրային սննդի օբյեկտները, զվարճանքի, շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, խաղատները և բաղնիքները (սաունաները) առանց թույլտվության ժամը 24.00-ից հետո աշխատացնելու համար Քաղաքացի Աստղիկ Ղազարյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ դրպես տույժ կիրառել նախազգուշացում:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Աստղիկ Ղազարյանին :

3. Որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ. փետրվարի 25
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 65

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասով, 23-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 58-59-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Ոստիկանության Կոտայքի բաժնի 21.01.2021 թվականի՝ վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը, ինչպես նաև՝ Գեղամ Ափրոյանի բացատրությունը, նկատի ունենալով, որ իրավախախտի կողմից 12.01.2021 թվականի դրությամբ վճարվել է օրենքով սահմանված տեղական տուրքը ընթացիկ ողջ տարվա համար, **որոշում եմ.**

1. Գեղամ Ափրոյանի կողմից Կոտայքի մարզի Վերին Պտղնի վարչական համայքի Երևան-Սևան մայրուղի թիվ 12 հասցեում առանց համապատասխան թույլտվության տնտեսական գործունեության՝ Առևտրի և հանրային սննդի օբյեկտները, զվարճանքի, շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, խաղատները և բաղնիքները (սաունաները) առանց թույլտվության ժամը 24.00-ից հետո աշխատացնելու համար Քաղաքացի Գեղամ Ափրոյանի ենթարկել վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ որպես տույժ կիրառել նախազգուշացում:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Գեղամ Ափրոյանին :

3. Որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021 թ. փետրվարի 25
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
02 ՄԱՐՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 66

ՄԵԼԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածով, համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 56-Ա որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Մելինե Հովհաննիսյանի դիմումը, միաժամանակ հաշվի առնելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը՝ որոշում եմ.

Համայնքի 2021 թվականի բյուջեի այլ նպաստներ ծախսերի (0 խմբի 7-I ենթախմբի 4729 հոդվածից Վերին Պտղնի համայնքի բնակիչ Մելինե Հովհաննիսյանին տալ 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ. մարտի 02
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48, Հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
04 ՄԱՐՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 67

«ՏՐԱՆՍԳԱԶ» ՍՊԸ-ԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 53-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Տրանսգազ» ՍՊԸ-ի դիմումը՝ **որոշում եմ.**

Հարգել «Տրանսգազ» ՍՊԸ-ի խնդրանքը և թույլատրել վերջինիս քանդել իրեն պատկանող արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում գտնվող N2, N3, N7, N 8 շինությունները ամբողջությամբ ,իսկ N11 շինությունը մասնակի՝ 1299.25քմ-ից 149.6 քմ-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021թ. մարտի 04
գ.Վերին Պտղնի